

卷之三

Պողիամբին ըստ յերկրութիւնի, միացե՛ք.

№ 1 ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ · № 1

Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

11

ԵԱՅ-ԶԱԴԵՑԻ ԱԲԱՍԻՆ

(ԱՐԵՎԱՏՅԱՆ ԼԵԳԵՆԴԻ)



NEW YORK PUBLIC LIBRARY
MAIN BRANCH
JULY 1 1922
MRS. GEORGE B. MOORE

891.995
7-26

1927 P.

ԲԻԳԼԻՒ

29 MAR 2013

8177

ՇԱՀ-ԶԱԴԵՅԻ ԱԲԱՍԻՆ^{*})

(Արևիկան լեզենյ)

I

Իմաստուն եր Շահ-Մուրադը: Նրա համբավը
տարածված եր աշխարհիս ամեն կողմ: Խաղաղ եր
նրա յերկիրը, հարուստ ու բարգավաճ: Հարուստ եր
և ինքը, առւնը լի ամեն բարիքով, զրամատունը վոս-
կով ու թանկագին քարերով: Ամենքը յերանի եյն
տալիս նրան, ու համարում ամենայերջանիկը բոլոր
մարդկանց ու թագավորների մեջ: Բայց ինքը, Շահ-
Մուրադը դժբախտ եր համարում իրեն, և շարունակ
գլուխը կախ մտածում իր միակ վորդու—ֆահրազի
մասին:

Շահ-Զադե Թահրազը մի գեղեցկադեմ, առողջ ու
աշխույժ յերիտասարդ եր: Բոյը կարծես բարզի ծառ
լիներ, աչքերը—փայլուն փիրուզ, իսկ թշերը—վոնց
վոր Գյուլիստանի նոր բացված վարդ: Թե ձի հեծ-
ներ, կասեյիր փայլակ շողաց, թե լախտ խաղար, կա-
սեյիր բազե յե պտառում, թե հետդ զրուցեր, կասեյիր
գարնան կարկաչուն աղբյուր ե շոյում ականջդ...

Բայց շոայլ եր ֆահրազը, անդուսպ շոայլ ու
վատնոլ: Նա չըգիտեր ինչ բան ե աշխատելը, վոր-
տեղից ե իր հոր անչափ գանձն ու հարստությունը,

*) Շահ-Զադե պարսկերեն նշանակում է շահի վորդի: Աբասի—
նշանակում է 20 կոպեկանոց:

վոր այնքան անխնա կերպով վատնում, գեն եր ա-
ծում ինքը, Յեկ ինչքան շատ եր շոայլում, այնքան
ավելի յեր ծանրանում աշխատավոր ժողովրդի դրու-
թյունը, վորի հարկերն ու տուրքերն որ ավուր ավե-
լացնում եր Շահ-Մուրադը, մի կողմից մտածելով,
թե Ֆահրադը մի որ խելքի կգա, մյուս կողմից ել մտա-
հոգում, վոր յեթե այդպես շարունակվի, տղան չի
կարող կառավարել ժողովրդին իրենից հետո, քանի
վոր ժողովրդի մեջ տրաունջներն ու դժգոհություն-
ներն որըստորե աճում եյին:

Իսկ Ֆահրադը մի անգամ արդեն ընկել եր ծուռ
ձանապարհ, և քանի գնում, այնքան ավելի յեր ան-
ուղելի դառնում: Վոչ մի հորդոր կամ սպառնալիք
չեր ոգնում: Իմաստուն Շահ-Մուրադը, վոր հազա-
րավոր մարդկանց խելք եր սովորեցնում ու ձանա-
պարհ ցույց տալիս, չեր կարողանում իր վորդուն
խրատել, դարձի բերել:

Մի որ ել հուսահատված Շահ-Մուրադը, իր պա-
լատականների հետ զրուցելիս հայտնեց, թե ով վոր
մի հսար գտնի, կամ մի մարդ, վոր իր վորդուն,
Ֆահրադին դարձի բերի, կստանա մեծ պարզեւ:

Մեկը խորհուրդ տվեց ոտար յերկիր ուղարկել
վոր կյանքը փոխվի, մյուսը խորհուրդ տվեց տանը
պահել և շրջապատել նրան խելոք մարդկանցով ու
զրքերով, մի յերրորդը դատավ, վոր Շահ-Զադեն վոր-
սորդությամբ զբաղվի, և այլն, բայց այս բոլոր փոր-
ձերն անաջող անցան: Ֆահրադն առաջվա պես և ել
ավելի սկսեց զվարճությունների, խրախճանքի յետելից

ընկնել. և այս բանն ավելի յեր զարգանում նրա մեջ,
քանի ավելի յեր մեծանում:



II

Մի որ ել Շահ-Մուրադը նստած եր իր պատշ-
գամբում, յերբ նկատեց, թե ինչպես մի բեռնակիր
մշղին դրված ծանրության տակ հազիվ որոր-
վելով քայլում է ու անիծում իր որը—ասելով.

—Մի, յեթե Շահ-Զադեյի մի որվա ծախսած
գումարն ինձ տային, մի ամբողջ տարի ընտանիքս
սովից կազմատվեր:

Ե՞ն, ալլահ, ալլահ... մարդ բախտ ունենար ու
Շահ-Զադե ծնվեր... հառաչեց մշակն ու բեռը հար-
մարեցնելով մոտիկ քարին, վրան դրեց ու ինքը
նստեց հանգստանալու:

Շահ-Մուրադը մտածմունքի մեջ ընկալ, թե կան
մարդիկ, վորոնք յերանելի յեն համարում իր վորդուն
և վորոշեց ծպայալ կերպով զրուցել բեռնակրի հետ:
Նա կանչեց իր ծառային, պատվիրեց, վոր ողնի

բեռնակրին և իմանա, թե վորտեղ ե ապրում նա, և
ինչ ե նրա անունը:

Մութ ու ցուրտ ձմրան գիշեր եր: Քաղաքի խուլ
թաղերից մեկում, մի կիսավեր խրճիթի մեջ, բեռնա-
կիր Ոսմանը յերեխաներին ծածկել եր թաղիքով, վոր
չմրսեն, իսկ իսքը կնոջը պատմում եր, թե ինչպես
շահի ծառան ողնել եր իրեն բեռը տանելու, յերք
մեկը դուռը բաղիսեց:

— Դուռը բաց ե. ներս համեցեք, ձայնեց Ոսմանը:

— Տունդ շեն մնա, ներս մանելով ասաց ոտա-
րականը, վոր ճամբորդ Հասանին գիշերելու մի ան-
կյուն գտնվի:

— Գլխիս վրա, պատասխանեց Ոսմանը, համեցեք
յեղբայր Հասան, համեցեք. տանս նստելու ուրիշ հար-
մար բան չունեմ, բայց փալանս կարող ե նստարա-
նի տեղ ծառայել. վոչ խան եմ, վոչ ել շահ, վոր փա-
փուկ բազմոցներ ունենամ, քեզ պես պատվական
մարդուն պատվելու համար: Ասենք... յեթե շահ լի-
նելի, յես ել շահի պես զոնադ չեյի ընդունի, են ել
քեզ պես մոլորված զոնադ...

Խրճիթը մութն եր, և Ոսմանը չնկատեց, թե
ինչպես ոտարականը շառագունեց նրա խոսքերից:

— Շիրին, դարձավ Ոսմանը կնոջը, մեր հյուրը
սոված կինի, բեր, ինչ վոր ուտելու բան կա:

Շիրինը կոացավ, մարդու ականջին փսփսաց, թե
բացի չոր ու ցամաք հացից, ուրիշ վոչինչ չունեն
ուտելու:

— Բեր, կնիկ, բեր, ինչ անենք թե միմիայն ցա-

մաք հաց ե, զոնաղին ինչ վոր տան, են ել կուտի:
Ոտարականը հայտնեց, թե քաղցած չե, և խընդ-
քեց, վոր նեղություն չքաշեն ուտելիքի համար:

— Ավելի լավ, ժպտալով ասաց Ոսմանը. թող
ինձ մոտ հյուր յեկողը միշտ կուշտ լինի, իսկ յեթե
քաղցած լինի, բայց իմանա, վոր միմիայն չոր-ցամաք
հաց են տալու և նեղանա, թող ինքն ել իմ որը, իմ
նեղությունը քաշի, վոր իմանա, թե ինչքան ծանր ե
տանտիրոջ համար, վոր անժամանակ յեկած զոնաղին
չի կարող արժանի պատիկը տալ:

Բայց, Հասան յեղբայր, ներիր, վոր չհարցըի ով
լինելոց, վորտեղից և ինչի համար գալդ մեր քաղաքը,
յեթե անհարմար չե, ասա, կիսունք, ժամանակը
կանցնի, կլուսանա, միենույն ե, չոր հաց չուտող զո-
նաղը, չոր տափին առանց անկողին չի քնի, իսկ յես
բացի մի թաղիքից, վորի վրա յես ու կինս ենք պառ-
կում առանց հանվելու, ուրիշ վոչինչ չունեմ:

Ղոնաղը նորից շառագունեց Ոսմանի անողոք, կծու
հեղնանքից, բայց իրեն զսպելով ասաց.

— Յես, Ոսման ախաբեր, հեռու տեղից եմ գալի:
Հսել եմ, թե Շահ-Զադե Ֆահրադը մի անուղղելի յե-
րիտասարդ ե, վորին ուղղելու, դարձի բերելու հա-
մար, շահը մեծ պարզե և խոստացել, յեկել եմ բախտս
փորձեմ. մի առաջարկ ունեմ, մի միջոց. յեթե աջող-
վի, պարզել կըստանամ, ծեր հասակում ապահով կապ-
րեմ, պատասխանեց Հասանը, և ձեռներն սկսեց ճմռել:

— Լավ միտք ե, լավ ել զործ, ասաց Ոսմանը,
բայց ինձ վոր լսես, յետ կդառնաս քո տուն, վորով-

հետեւ պարզեի փոխարեն զլուխդ կարող ես թողնել
մեր քաղաքում: Շահ-Զադե Ֆահրադն անուղղելի յե:

Այ, յեթե Շահը խելք ունենար և ինձ լսեր, յես
նրան կասեյի, թե ինչ միջոց կա Ֆահրադին ճամբի
բերելու, բայց յես կարող եմ հանդինել, մտնել իմաս-
տուն Շահ-Մուրադի մոտ, և խելք սովորեցնել նրան...

Իսկ ինչ ե քո առաջարկելիք միջոցը, յեթե միայն
գաղտնիք չե. չվախենաս, Ոսմանն ուրիշի հացը չի խի:

Ոտարականը քիչ մտածելուց հետո, դարձավ Ոս-
մանին.

— Գիտես, Ոսման ախպեր, յեկ մի բան ասեմ.
ալլահը կամեցել ե, վոր մենք իրաք հանդիպենք. արի,
յես իմ մտածածն ասեմ քեզ, դու ել քոնն ինձ ասա,
վորիս առաջարկով վոր Շահ-Զադե Ֆահրադն ուղղվի,
խոստացած պարզել կիսենք:

— Լավ. համաձայնվեց Ոսմանը, միայն մի պայ-
մանով, վոր յեթե վոչ մեկիս առաջարկն ել չընդուն-
վի, կամ աշողություն չգտնի, Շահ-Մուրադի ֆար-
րաշների ֆալախկայի հարվածները քո վոտներին միայն
կպչեն. իմ անունը վոչ վոք չիմանա: Յեթե համաձայն
ես, ասա քո գիտցած միջոցը, հետո յես իմը կտսեմ:

— Համաձայն եմ, հայտնեց ոտարականը. յես
կարծում եմ, վոր Շահ-Զադե Ֆահրադը կուղղիվ, յե-
թե Շահ-Մուրադը նրան Մուֆթի*) դարձնի: Ֆահրա-
դի հոգեոր մեծ կոչումը և պաշտոնը, նրան անհար-
մար զրության մեջ կդնեն, և նա ուղի-չուզի, ժողո-
վրդի առաջ բարոյական յերկալու համար, ձեռք կը-

քաշի զվարճություններից ու շոայլություններից: Հի-
մի, Ոսման ախպեր, զու յել քոնն ասա:

Ոսմանը քմծիծաղ տալով դարձավ Հասանին.

— Չնեղանաս, ոտարական յեղբայր, իս թանկա-
գին հյուր, վոր ասեմ, թե չնավանեցի առաջարկի:
Դու գիտես, թե ինչ ես ուզում անել. ուզում ես
շահի գանձարանն ապահովես, և ժողովրդի զբանի
բերանն ու քսակը տաս Ֆահրադին: Ի՞նչ միամիտ
մարդ ես, վոր կարծում ես, թե մոլլաները, դադիներն
ու մուֆթիները բարոյական մարդիկ են, աստծու
ծառաներ: Դրանց ֆարաջան ե, վոր մարդկանց աչքից
ծածկում ե նրանց կեղտերը: Առանց են ել Ֆահրադը
ձրիակեր ե, դու ուզում ես նրան ձրիակերների զլու-
խը, նրանց պետը դարձնես .. Զե, չնավանեցի առա-
ջարկ: Բայց փորձիր:

— Իսկ քո առաջարկն ինչ ե, քննը. պնդեց Հա-
սանը:

— Իմը, յեղբայր, անիրազործելի մի բան ե.
բայց պայմաններիս համաձայն, կասեմ: Իս առաջար-
կը, ձիւտ քոնին հակառակն ե: Յես կարծում ես, վոր
մինչև Ֆահրադը չիմանա, թե ինչ բան ե աշխատան-
քը, չճաշակի նրա բոլոր գառնությունները, չի իմանա
վոչ իր տան, վոչ իր կարողության, վոչ ել այն վո-
զի պատիվը, վոր այնքան անխնա ծախսում, վատ-
նում ե. մինչև ինքն ել ինձ պես փալան չառնի մեջ-
քին, բեռան տակ չտնքա ու չքրտնի, չի իմանա, վոր
են ծախսվող փողերը մեզ պես համբարների կորացած
մեջքից են հանում ու լցնում շահի գանձարանը:

*) Մուֆթի—հոգեորականության պետ, զլուխ:



Միմիայն աշխատանքը կարող է նրան ուղղել, դարձի բերել...

Ցես վոր շահի տեղը լինեմ, Ֆահրադին կզրկեմ
թե ժառանգությունից, թե կրչումից և թե կարողությունից: Թող գնա ու իր աշխատանքով ապրի, թե
կարող ե: Միմիայն աշխատանքը կարող է նրան ուղղել, դարձի բերել:

Բայց... Շահ Մուրադը կհամաձայնվի... Դժվար
թե: Ահա թե ինչու յեմ ասում, վոր իմ առաջարկն
անիրաքործելի յե: Կուզես, ասա շահին, առաջարկիր,
բայց վախեցիր Փալախկայից, նրա ճիպոտների հար-
փածները յես մի անգամ ճաշակել եմ կրունկներիս:

Լուսաբացը մոտ եր: Ոտարականը հրաժեշտ տվեց
Ոսմանին, իսկ վերջինս պառկեց մի քիչ հանգստա-
ցնելու իր ջարդված վոսկորները:

III

Ուշ արթնացավ Ոսմանը, բայց աչքերը բացվելուն

պես կինը նրան հայտնեց, թե գուրսն ինչ վոր իսո-
սում են շահի նոր ֆերմանի*) մասին, թե իբր Շահ-
Մուրադը զրկել է իր միակ վորդուն, թագաժառանդ
ֆահրադին, զահից, անունից ու ժառանգությունից:

— Կնիկ. ասաց զարմանքից աչքերը չուծ Ոս-
մանը. զիշերվա մեր զոնաղն անպատճառ ինքը Շահ-
Մուրադն է յեղել, թե չե ով կարող եր եսպես շուշ
հասնել շահի պալատը, մասնել նրա մոտ, ասել իմ մտա-
ծած դատարկ զրույցը...

Սպա փալանը մեջքին հագնելով գուրս եկավ հրա-
պարակ, կնոջն ասելով.

— Շիրին. թե այլևս չվերադառնամ տուն, ել
չփնտրես, կընշանակի Շահ-Մուրադի պարզեին եմ ար-
ժանացել:

Շիրինը թեև չհասկացավ մարդու ասած յերկի-
մասս դարձվածքը, բայց սովոր լինելով նրա կատակ-
ներին, առանձին ուշք չդարձրեց:

Այդ որը վողջ քաղաքի խոսակցությունը շահի
ֆերմանն եր: Այստեղ՝ այստեղ հավաքված խմբեր տաք-
տաք վիճում եյին, վոմանք գովում շահի խելացի վո-
րոշումը, վոմանք քննադատում:

Շահի ֆերմանի մեջ պարզ ասված եր, վոր Շահ-
Մուրադը հրաժարվում է Ֆահրադին իր վորդին ճանա-
չելուց, հրամայում է իր բոլոր հպատակներին, վոր
նրան, իբրև Շահ-Զադեյի, վոչ պարտք տան վոչ ել
պատիվ, իսկ ոտար, հարևան պետություններին ել
խնդրում ե, վոր Ֆահրադին իրենց յերկիրը չթողնեն:

*) Ֆերման—գեկրետ, հրաման, մանիքնատ:

Ումանն ամեն կերպ աշխատում եր հրապարակում այդ մասին չխոսել. վախենալով, թե կարող են բան իմանալ, և շարունակ շուրջն եր նայում, վոր հանկարծ չլինի իրեն բռնեն վոստիկանները և տանեն պատժելու իր հանդուգն խորհրդի համար:

Այսպես ահ ու դողով նա ապրեց առաջին որը, յերկրորդը, յերրորդը. նրան վոչ մի բան ասող չեղավ, ու մի իրիկուն ել, յերբ տանը նստած խոսում եր այն մասին, թե ինչպես Շահ-Զաղե Ֆահրադից ամենքը յերես են դարձրել, անդամ նրա մոտիկ ընկերները, վորոնք շարունակ նրա հետ քեֆեր եյին անում, դուռը կրկին բաղխեցին.

— Ներս համեցեք, Փուխարա (ազքատ) Ոսմանի դուռը միշտ բաց ե:

— Սալեմ ալեքում*) Ոսման ախպեր, չես ասում, թե քո դոնադ Հասանն ինչ եղավ, մեռավ, սպանվեց, բանան ընկավ շահի հրամանով, թե մեծ պարզեւ ստացավ...

— Վոչինչ պատահած չի նրան, և յես շատ գոհ եմ, վոր իմ դոնադը, իմ Հասանը նորից մեզ հիշեց, բայց, այ մարդ, ինչպես շուտ կարողացար հասնել շահի պալատը, և խոսել նրա հետ:

— Ե՞ն, յեղբայր Ոսման, շահն ինձ Յ որ համարյաբանտարկած պահեց, մինչև վոր չիմացավ, թե վոչ մի վաճառական Ֆահրադին ապառիկ չի տալիս, վոչ

մի զառափ *) վոր չի պարտք տալիս, և վոչ մի ճաշարանատեր ապառիկ կերակուր, ինձ չթողեց, վոր գամ քեզ տեսության:

Հիմի յել... ճշմարիտ ե, յեկել եմ, բայց իսկույն յետ եմ գառնալու: Շահի խոստացած մեծ պարզեր թեև յես չեմ ստացել, բայց շեն մնա նրա գանձարանը, ինչ վոր տվել ե, յեկ առ այժմ կիսենք:

Այս ասելով Հասանը մի վոսկի գցեց Ոսմանի գոզը, և ինքն անհետացավ:

Հասանի հեռանալուց հետո, Ոսմանը վոսկին ձեռին բռնած դարձավ կնոջը.

— Շիրին, առ պահիր այս հարամ փողը, մինչեւ տեսնենք բանն ինչով ե վերջանալու. Ոսմանն այնքան հիմար չե, վոր չճանաչի իր հետ խոսողին. քեզ ասում եմ—դա Շահ-Մուրադն ե, մի վոսկու տեղ հարյուրը կհանի մեջքից:

Կինը թեև համաձայն չեր մարդու հետ, բայց և այնպես կատարեց նրա պատվերը, և դրամը պահեց:

IV

Որերն անցնում եյին, և Շահ-Զաղե Ֆահրադը քանի գնում, այնքան ընկճվում, այնքան հուսահատվում եր: Վոչ մի մարդ նրան ձեռք չեր մեկնում, վոչ մի ընկեր կամ բարեկամ—ուշադրություն: Ո՞վ եր գժվել Ֆահրադին, շահի ֆերմանով ամեն իրավունք ներից զըրկված Ֆահրադին, պատապարել կամ պաշտպանել:

*) Զառափ վոր մանբացնող, վոր մանը կու համար տոկու ե վերցնում:

*) Պարսիկներն ու թուրքերն իրար հանդիպելիս այս խոսքերով են բարեւում:

ՅԵՎ ՆԱ՝ Շահ-Զադեյից—դարձավ մի արհամարհ-ված դատարկաշրջիկ, վորը ծախելով իր վերջին զգես-տը, մնացել եր ցնցոտիներով, և մի ժամանակ յերկրի պարծանք յերիտասարդը, այժմ նման եր մի ջաղաց-պանի, քուրքի մեջ փաթաթված ու ալրոտ, փոշոտ...

Մի որ ել ֆահրադը յերբ աչքելը բաց արեց խո-նավ նկուղում (իսկ նա ապրում եր պալատի նկուղ-ներից մեկում, այն ել շնորհիվ ախոռապանի հովանա-վորության), նկատեց, վոր այլևս վոչ փող կա գրպա-նում և վոչ ել ծախելու բան։

Զմրան ցուրտ որ եր. խոնավ նկուղն ել ավելի յեր խոնավ ու ցուրտ թվում նրան։ Կարծես գերեզ-մանի հոտ եր գալիս։ Պետք եր գուրս գալ. բայց գեպի ուր... Գոնե մի տաք անկյուն լիներ, մի կաոր հաց... Ու հիշեց ֆահրադն անցած որերը, հիշեց ու արտասվեց։

Սակայն ի՞նչպես են ապրում ալքատ մարդիկ, մտածեց նա. ի՞նչ են անում նրանք, վոր ապրում են առանց շահի գանձարանի...։

Ու վորոշեց ֆահրադը դուրս գալ հրապարակ, տեսնելու, թե ինչով և ինչպես են ապրում մարդիկ, գուցե ինքն ել սովորի։

V

Հրապարակում յեռ ու զեռ եր, առետուր, մշակ-ները բեռներ եյին կրում, կյանքը յեռում եր. ծիծա-դում—խնդում ելին բեռնակիրները, կատակներ ա-նում, կարծես թե իսկի մեջքներին ծանրություն չը-լիներ։

Կանգնել եր ֆահրադն ու դիտում եր այդ իրեն անծանոթ աշխարհը, յերբ մեկը հեռվից կանչեց.



Կանգնել եր ֆահրադն ու դիտում եր այդ իրեն անծանոթ աշխարհ...։

— Ե՞յ, մի ես, ի՞սչ ես պարապ կանգնել, յեթե ուղում ես, յեկ այս բեռը տունս հասցրու, ցըտից փետացել ես, համ կտաքանաս, համ ել մի աբասի փող կաշխատես, մի որ կապրես։

Ֆահրադը մի քիչ կանգ առավ, մտածեց՝ զնալ, թե չե, և բնազդաբար վազեց գեպի բեռան տերը, տոպ-րակն առավ շալակն ու հայդե...։

Անսովոր ծանրության տակ ֆահրադը քիչ ան-հարմար զգաց իրեն, բայց մի հաճելի տաքություն անցավ նրա—ցըտից համարյա ցամաքած յերակներով, ու քայլերն ել ավելի արագացրեց։ Տերը նրան խոս-տացած աբասին վճարեց։

Կանգնել եր ֆահրադն աբասին ձեռին փողոցի
անկյունում։ Նա շուտ-շուտ նայում էր աբասուն, ապա
սեղմում կրծքին, նորից նայում, շոյում, ինչպես մայ-
քը իր անդրանիկ զավակին։ Ֆահրադը մինչև անդամ
մոռացել եր, թե առավոտից փոշինչ չի կերել։ Նա
այնքան եր տարվել իր առաջին աշխատանքով, վոր
մոռացել եր և քաղց, և ցուրտ։ Մութն ընկնում եր,
բայց ֆահրադը չեր ել մտածում վորևե բան առնելու
մասին։ Ինչպես կարելի յե հեշտությամբ ծախսել այն-
քան սիրելի փողը, իր հալալ քրտինքի առաջին աշխա-
տանքը…

Ու ֆահրադը գեղեցիկ հուլունք գտած յերեխայի
պես, վաղեց դեպի հոր ախոռապանը, վոր ցույց տա
նրան, թե ինչ գեղեցիկ ե. իր աշխատած աբասին, վորի
նմանը ինքը «չեր տեսել» իր հոր գանձարանում։

Ախոռապան Ոմարը ծիծաղեց ֆահրադի վրա, և
խսկի յել ուշադրություն չդարձրեց նրա աշխատած աբա-
սու վրա։ Ֆահրադը խոռված յերեխայի պես քաշվեց
իր նկուղը և աբասին կրծքին պինդ սեղմած վորոշեց
մի լավ տեղ պահել այն, և մյուս որը դուրս գալ նո-
րից աշխատանքի։ և յեթե վաղն ել բախտը բանի, և
փող աշխատի, ապա նոր միայն ծախսի մյուս որվա
աշխատանքը, յերբ շահի ծառան դուռը բաց անելով
հայտնեց, թե Շահ-Մուրադը նրան կանչում եւ։


Շահ-Մուրադը, վոր ծառաներին պատվիրել եր,
հետևել ֆահրադի կյանքի մեջ կատարվող բոլոր
փոփոխություններին, իմացավ ախոռապանից ֆահրա-
դի աբասու պատմությունը, և յերբ ֆահրադը ներս

մտավ հոր առանձնասենյակը, վերջինս նստած եր վառ-
վող տաք բուխարու առաջ։

— Դե, ֆահրադ, ասաց Շահ-Մուրադը վորդուն,
ասա տեսնեմ ինչպես են անցնում որերդ, լսեցի, վոր
այսոր շատ ուրախ ես, փող ես աշխատել, կարելի՞ յե
տեսնել, թե այդ ինչ տեսակ փող ե։

— Այն, հայր, աշխատել եմ, և այնպիսի մի աբասի,
վոր քո գանձարանում յերբեք յես չեմ տեսել. ահա,
առ, դու յել տես. պատասխանեց ֆահրադը, ու բռումը
պինդ սեղմած աբասին տվեց հորը։

Շահ-Մուրադը վերցնելով աբասին, տնդղեց ու
հենց ֆահրադի աշքի առաջ, նետեց վառվող բուխարին։



Ահա, առ, դու յել տես...

— Ի՞նչ ես անում, հայր. զոռաց Ֆահրաղն ու
ձեռքը մեկնեց, վոր կրակից հանի իր աբասին:

Ֆահրաղի ձեռքն այրվեց, բայց նա մյուս ձեռ-
քով ուզեց հանել իր սիրելի աբասին: Անողուտ: Ֆահ-
րաղի մյուս ձեռքն ել այրվեց:

Շահ. Մուրաղը կանչեց պալատական բժշկին, վոր
Ֆահրաղի ձեռքերը բժշկի, և յերբ Ֆահրաղը ցավից
աղիողործ ճշում եր, Շահ. Մուրաղը ժպտալով ասաց
նրան:

— Այժմ, Ֆահրաղ, դու դարձյալ իմ ժառանգն ես
ու հարազատ, սիրելի վորդիս:

Այժմ դու կուղղվես, վորովհետեւ այն վատնող
ձեռքերն այրվեցին, և նրանց տեղ առաջ եկան աշխա-
տանքի ձեռքեր: Թող ալլահը յերկար կյանք տա համ-
բալ Ոսմանին, վոր քեզ դարձի բերեց:

Մյուս որը ամբողջ ազգաբնակությունը խոսում
եր Շահ. Մուրաղի նոր ֆերմանի մասին, վորով նա
վերադնում եր իր վորդի Ֆահրաղին նրա բոլոր
իրավունքները, և վոր շատ զարմանալի յեր ամենքի
համար, դա այն եր, վոր նույն ֆերմանով բեռնակիր
Ոսմանը նշանակում եր շահի պալատի խորհրդական:



8177

ԳԻՆԸ 10 ԿՈՊԵԿ

L U H E S N S E U E L

ՆՈՒՐԱ ՀԵՂԵԿԱՑԿԻ

1. Մինիստրներ,—պիես 1 գործ. 50 կ.
2. Տարն ու Մուլճը,—հեքյալ (չափածո) 50 կ.
3. Շահ Զադեյի արասին,—արևելյան լեզենդ . . 10 կ.

Հեղինակի հասցեն՝ Տիֆլիս, Աբաս-աբադսկայ պլ. № 7.

Դրամեզվար № 1806,

Տիրամ 2000.

Թիֆլիս, Ճ. Տ. Գ. Խ Պալկրաֆտրհոսի 4-ր տակ., Պուշկի փող. № 3.